**ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**
**Մանկավարժական աշխատողի թափուր տեղի**

Հիմք ընդունելով ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2020 թվականի դեկտեմբերի 24-ի N 48-Ն հրամանով հաստատված «Նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական պետական ուսումնական հաստատության մանկավարժական աշխատողի թափուր տեղի համար անցկացվող մրցույթի կազմակերպման և անցկացման» կարգը՝ «Նոյեմբերյանի պետական քոլեջ» ՊՈԱԿ-ում առկա է «Գյուղատնտեսական աշխատանքների տեխնիկական ապահովում» մասնագիտության արտադրական ուսուցման վարպետի թափուր աշխատատեղ:

Արտադրական ուսուցման վարպետը պետք է ունենա դասընթացի բնույթին համապատասխանող միջին կամ բարձրագույն մասնագիտական կրթության որակավորում, կամ տվյալ մասնագիտական զբաղվածության բնագավառում աշխատանքային գործունեության փորձ՝ եթե տվյալ դասընթացի ուղղությամբ միջին կամ բարձրագույն կրթություն Հայաստանի Հանրապետությունում չի իրականացնում:
Մրցույթին մասնակցելու համար «Նոյեմբերյանի պետական քոլեջ» ՊՈԱԿ ներկայացնել հետևյալ փաստաթղթերը.

- ✓ դիում (Ձև 1),
- ✓ կրթության մասին հավաստող փաստաթուղթ (դիպլոմ) (բնօրինակը և պատճենը),
- ✓ անձնագիր (բնօրինակը և պատճենը),
- ✓ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք (առկայության դեպքում),
- ✓ ինքնակենսագրություն (Ձև 4),
- ✓ մեկ լուսանկար՝ 3x4 չափի,
- ✓ այլ պետությունների քաղաքացիները՝ Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ, բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության համապատասխան միջազգային պայմանագրերի ուժով աշխատանքի թույլտվություն ստանալու պահանջից ազատված օտարերկրացիների,
- ✓ Հայաստանի Հանրապետության արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաև զինվորական գրքույկ (բնօրինակը և պատճենը),
- ✓ հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական աստիճան, կոչումը հավաստող փաստաթղթեր (դրանց առկայության դեպքում):

Փաստաթղթերը ներկայացնել «Նոյեմբերյանի պետական քոլեջ» ՊՈԱԿ (ք.Նոյեմբերյան, Շիրազի 17) 2026թ. ապրիլի 15-ից մինչև 2026թ. ապրիլի 28-ը ներառյալ: Մրցույթը տեղի կունենա 2026թ. մայիսի 5-ին ժամը 15:00:

Հարգանքով՝

«Նոյեմբերյանի պետական քոլեջ» ՊՈԱԿ-ի
տնօրեն Կարեն Նազարյան